թութիւնը, անմեղ մարդկանց ծեծը, բանտարկեալներին մերկանդամ պարել տալը, կանանց բռնաբարելը եւն., որոնք կատարւում էին հասարակ պաշտօնեաների եւ զինուորների կողմից:

Ի հարկէ, սրանց համար եւս պատասխանատու են Ժորդանիան եւ իր կառավարութիւնը. որովհետեւ թէկուզ եւ նրանք համոզուած էլ լինէին, թէ խսկապէս «վրաց ժողովուրդը միշտ աչքի է ընկել իր հերոսութեամբ եւ քաղաքացիական պարտականաչութեամբ», չպէտք է անդիտանային, որ հերոսական եւ պարտականաչ ժողովուրդն էլ կարող է դաղանային բնաղդներ յայտնաբերել, եթէ համապատասխան մթնոլորտ եւ պայմաններ ստեղծուեն դրա համար: Իսկ ամէնքին յայտնի է, որ ազգայնական մթնոլորտը եւ ազգային հալածանքները — մանաւանդ երբ սրանք ուղղուած են մի նիւթապէս բարեկեցիկ ժողովուրդի դէմ — միշտ հրահանգում են հասարակ մարդկանց ընչաքաղցութիւնը, կամայականութեան տենչը եւ այլ ստորադոյն բնաղդները:

Այնուամենայնիւ, մենք կանգ չենք առնում այս բնաղդների շղթայազերծման եւ նրմանօրինակ պատճառների վրայ, որովհետեւ, ինչպէս ասացինք, դրանցով պայմանաւորւում են վրաց կառավարութեան կողմից պատերազմի առթիւ ձեռնարկուած հակահայկական հալածանքների արտաքին ձեւերը կամ արտայայտութիւնները, բայց ոչ թէ այն քաղաքականութիւնը, որոնք այդ հալածանքների հիմքն էին կազմում:

Այդ քաղաքականութիւնը էապէս բացատրւում է այն երեք պատճառներով, որ մենք մատնանշեցինք վերեւ՝ «պատերազմական անհրաժեշտութեան» առասպելը հերքելուց յետոյ: Ընթերցողին է մնում դատել, թէ նման պատճառներով մի ամբողջ ազգային փոքրամասնութիւն ամենակատաղի եւ ամենավայրագ ճնշումների ենթարկելը որքա՞ն է համապատասխանում այն ընկերվարական եւ ժողովրդավարական սկզբունքներին, որոնց անունից չարունակ խօսում են Հանրապետական Վրաստանի վարիչները...

* * *

Դժբախտաբար, հայ-վրացական պատերազմի հաշուեյարդարից յետոյ եւս Ժորդանիայի կառավարութեան քաղաքականութիւնը, վիրահայ ազգային փոքրամասնութեան խնդրում, չփոխուեց:

Ճիշդ է, պատերազմական շրջանի հալածանքները դադարեցին: Այլեւս փողոցներում եւ տներում «ռազմադերիներ» չէին որսում եւ ոչ էլ դանդուածային բանտարկութիւններ կամ հրապարակային դրամաչորթութիւններ կատարում: Ընդհակառակը, Թիֆլիսում եւ այլ ուրեք «դերուած» եւ Քութայիս աքսորուած հայերին թոյլ տուին վերադառնալ իրենց տեղերը, բանտարկեալներին արձակեցին եւ ընդհանրապէս նախապատերազմեան օրինական վիճակը վերահաստատեցին: Սակայն, այս օրինական վիճակը կրկնութիւնն էր միայն — եւ վատ ձեւի կրկնութիւնը — այն իրաւազուրկ կացութեան, որին մատնուած էր Վրաստանի հայութիւնը ազգային փոքրամասնութեան իրաւունքների տեսակէտից:

Եթէ մինչեւ պատերազմը խօսք չկար վիրահայ ազգային փոքրամասնութեանը վարչական, դատաստանական կամ լեզուական առանձին իրաւունքներ տալու մասին՝ այժմ առաւել եւս: Եթէ այն ժամանակ պետական ընդհանուր բիւրջէից միայն փշրանքներ էին նետւում վիրահայերի ազգային-մշակութային կարիքների համար՝ այժմ այդ փշրանքներն էլ զլացւում էին: Զլացւում էին այն աստիճան, որ վերահաստատուած Վիրահայ Ազգային Խորհուրդը հարկադրուած էր Հայաստանի կառավարութեան նիւթական օգնութեանը դիմել՝ Վրաստանի հայկական դպրոցների անխուսափելի փակումը կանխելու համար...

Պատերազմի օրերին պետական պաշտօնեներից հեռացուած հայերը հեռացուած էլ մնացին, եւ երեք հարիւր հազարից աւելի համրանք ներկայացնող վիրահայ ժողովուրդը, հազուադիւտ բացառութիւններով, մեկուսացուած էր պետական կեանքից: Նոյն մեկուսացման քաղաքականութիւնը առաջ էր տարւում եւ հանրային գործերում: Ամբողջ երկու տարի, Ժորդանիայի կառավարութեան աչքի առաջ, վրացիք մենատիրօրէն եւ կամայականօրէն վարում էին Թիֆլիսի քաղաքային գործերը, եւ այդ կառավարութիւնը մտքովն իսկ չէր անցնում